Հայ պատմագրություն
5-րդ դարի պատմիչներ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

(442- 510)

Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Եղիշեի պատմական երկերի շարունակողն է Ղազար Փարպեցին:

Ծնվել է 442 թվականին Արագածոտն գավառի Փարպի գյուղում: Մանկությունն անցել է Ցուրտավում՝ Գուգարաց Աշուշա բդեշխի պալատում, որտեղ կրթվել ու հասունացել է հայոց ապագա սպարապետ և մարզպան Վահան Մամիկոնյանի հետ: Ուսումը շարունակել է Բյուզանդիայում (465–470), որտեղից վերադառնալով՝ կրթական գործունեություն է ծավալել Շիրակում և Սյունիքում:

486 թվականին Վահան Մամիկոնյանը, որ արդեն Հայաստանի մարզպանն

էր, Փարպեցուն նշանակել է Էջմիածնի վանահայր: Վերջինս բարեկարգել է վանքը, հիմնել մատենադարան: Սակայն որոշ խավարամիտ հոգևորականներ զրպարտել ու հալածել են նրան: Ստիպված հեռացել է հայրենիքից (մոտ 490-ին), հաստատվել Ամիդում: Այստեղ գրել է «Թուղթ առ Վահան Մամիկոնյան» ուղերձը՝ ճարտասանական հնարանքներով ապացուցելով իր անմեղությունը և մերկացնելով ստախոս հոգևորականներին: Վահան Մամիկոնյանը ետ է կանչել նրան և վերահաստատել իր պաշտոնում: Մեծագործ մարզպանի պատվերով էլ Փարպեցին գրել է իր «Հայոց պատմությունը»:

Պատմիչը վախճանվել է 510-ին. թաղված է Ղազարավան գյուղի հարակից վանքի եկեղեցում:

Ղազար Փարպեցին ձգտել է գրել ստույգ պատմություն, ուստիև ճշտել է իր ձեռքին եղած բոլոր աղբյուրներն ու ականատեսների վկայությունները: Իր արտահայտիչ լեզվով, հետաքրքիր մանրամասներով ու կենդանի նկարագրություններով այս երկը ևս Ոսկեդարի պատմական-գեղարվեստական արձակի խոշոր հուշարձան է:

Փարպեցու Պատմությունն ընդգրկում է շուրջ հարյուր տարվա ժամանակաշրջան՝ սկսած Հայաստանի մասնատումից, երբ, ինչպես նա պատկերավոր կերպով ասել է. «Հայոց աշխարհը հնացած ձորձի նման պատռվելով՝ երկու ծվենի բաժանվեց»:

Պատմիչը շարադրել է վերջին՝ Արշակունի թագավորների գահակալության ժամանակաշրջանի պատմությունը, Պարսկաստանի հայամերժ քաղաքականության հետևանքով Արշակունյաց թագավորության անկումը (428), Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի գործունեության վերջին շրջանը:

Փարպեցու Պատմության մեջ ընդարձակ անդրադարձ կա նաև Վարդանանց պատերազմին:

Հատկապես արժեքավոր է Պատմության վերջին դրվագը, որտեղ հեղինակը, իբրև ականատես, մանրամասն նկարագրում է 460-480-ական թվականների պատմական իրողությունները, մասնավորապես՝ պարսից բռնատիրության դեմ նոր ապստամբությունը՝ Վահանանց պատերազմը (481-484):

Փարպեցու Պատմության այդ դրվագը նշված ժամանակաշրջանի միակ սկզբնաղբյուրն է: Այստեղ կենտրոնական դեմքը Վահան Մամիկոնյանն է: Նա ժողովրդի հոգատար առաջնորդի կերպար է, քրիստոնեական հավատի և հայրենիքի անձնազոհ պաշտպան: Հայոց սպարապետը ապստամբության թե՛ ռազմական ղեկավարն է, թե՛ գաղափարախոսը:

Դիմելով պարսից արքային, Վահան Մամիկոնյանն ասում է. «Դուք ուզում

էիք մեր հոգին սպանել, իսկ այդ նեղությանն ու վտանգին ոչ մեր պապերը և ոչ էլ մենք չկարողացանք դիմանալ և զենք վերցրինք»: Այսինքն՝ թեև հայ ժողովուրդը ստիպված ընդունել է պարսիկների ֆիզիկական գերիշխանությունը, բայց երբեք թույլ չի տա սպանել իր հոգին, որովհետև առանց հոգու չկա ազգ: Եվ Վահանը խիզախորեն ու ազգային հպարտությամբ խոսում է իր ժողովրդի բարձր հոգու, ճշմարիտ հավատի ու զարգացած կենցաղավարության մասին՝ մերժելով օտարի հետադեմ կարգերն ու օրենքները...

Վահան Մամիկոնյանի կողքին կան մի շարք այլ հերոսներ, որոնք գիտակցված մահով անմահացած Վարդանանց հերոսների արժանի ժառանգորդներն են:

Ղազար Փարպեցին ավելի շատ վեհաշունչ ճարտասանական երկխոսություններով է առաջ տանում դեպքերի պատմությունը: Նա կատարել է նաև ճակատամարտերի ու բնության տեսարանների գեղեցիկ նկարագրություններ: Հիշարժան է հատկապես Պատմության սկզբում Արարատյան գավառի ընդարձակ ու տպավորիչ նկարագրությունը, որից բերում ենք մի դրվագ՝ աշխարհաբար փոխադրությամբ. «Հոյակապ, հռչակավոր, երևելի գավառն Արարատյան, որն ամեն ինչ բուսցնող է, ամեն ինչ տվող, ամեն ինչով լի, մարդկային կյանքին, վայելքին ու երջանկությանն անհրաժեշտ օգուտի ու դեղի համար ամեն ինչ ունեցող՝ դաշտեր լայնատարած ու որսալից, շուրջ բոլորը լեռներ՝ գեղեցկանիստ ու փարթամ արոտներով ծածկված, կճղակավոր ու որոճող կենդանիներով և նրանց հետ էլի ուրիշ բազմատեսակ արարածներով լեցուն...»:

Այսպիսի նկարագրություններով պատմիչը ձգտել է հայ մարդու մեջ արմատավորել անանց սեր իր գեղատեսիլ ու փառավոր բնաշխարհի հանդեպ:

Բացի այս, Ղազար Փարպեցին իր հայաշունչ երկը շարադրել է, որպեսզի իր հայրենակիցներն առաքինի մարդկանց բարի վարքը լսելով՝ ցանկանան նմանվել նրանց, իսկ խիզախներն իրենց նախնիների քաջագործությունների մասին տեղեկանալով՝ բազմապատկեն իրենց սխրանքները, արժանի հիշատակ թողնեն իրենց ազգի և անձի համար:

Մեր այս պատմիչը ևս լիովին հասել է իր նպատակին, քանի որ կարողացել է ստեղծել մինչև օրս սիրով կարդացվող առաքինության, քաջության ու հայրենասիրության մի ոգեշունչ մատյան:

Ոսկեդարում ստեղծված պատմագրական երկերն առաջնային բարձունքներ են գրավում վաղ միջնադարի ընդհանուր քրիստոնեական պատմագրության մեջ:

Մի բացառիկ բարձունք է գրավում նրանց մեջ լավագույնը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ, որտեղ և ինչ կրթություն է ստացել Ղազար Փարպեցին:
2. Ո՞ր պատմիչների պատմական երկերի շարունակողն է Ղազար Փարպեցին:
3. Փարպեցու Պատմությունը ո՞ր պատմական ժամանակաշրջանն է ընդգրկում: Մեկնաբանե՛ք հեղինակի հետևյալ միտքը՝ համեմատելով մեր ապրած հայ քաղաքական իրականության հետ. «Հայոց աշխարհը հնացած ձորձի նման պատռվելով՝ երկու ծվենի բաժանվեց»:
4. Ինչո՞ւ է Փարպեցու Պատմության այդ դրվագը նշված ժամանակաշրջանի միակ սկզբնաղբյուրը համարվում:
5. Ո՞վ է այս Պատմության կենտրոնական դեմքը, և ինչո՞ւ է այն կոչվում Վահանանց պատերազմ *(481-484):*
6. Մեկնաբանե՛ք Վահան Մամիկոնյանի հետևյալ միտքը և արտահայտե՛ք ձեր դիրքորոշումը. «Դուք ուզում էիք մեր հոգին սպանել, իսկ այդ նեղությանն ու վտանգին ո՛չ մեր պապերը և ո՛չ էլ մենք չկարողացանք դիմանալ և զենք վերցրինք»:
7. Ըստ ժամանակագրության՝ աղյուսակով ներկայացրե՛ք Ոսկեդարի նշանավոր դեմքերն և նրանց ծավալած գործունեությունը:
8. Ինչո՞վ է ավարտվում Պատմությունը: Վահան Մամիկոնյանի կերպարով ներկայացրե՛ք աշխատության հիմնական գաղափարները:
9. Մեկնաբանե՛ք Փարպեցու «Պատմության» վերնագրի և բնագիր իմաստային փոխադարձ կապը նախորդ պատմիչների «Պատմությունների» հետ: Անվանե՛ք վերնագրի այլընտրանքային տարբերակներ՝ պատճառաբանելով:

Ղազար Փարպեցին մաշտոցյան գրերի մասին (Արտաշես Մաթևոսյան)

https://artsakhlib.am/wp-content/uploads/2020/06/%D4%B1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B7%D5%A5%D5%BD-%D5%84%D5%A1%D5%A9%D6%87%D5%B8%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%82%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80-%D5%93%D5%A1%D6%80%D5%BA%D5%A5%D6%81%D5%AB%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%B7%D5%BF%D5%B8%D6%81%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A3%D6%80%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5-%BD%D5%AB%D5%B6.pdf

Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկը միջնադարյան նամակի տեսության լույսի ներքո (Աշոտ Ալեքսանյան)

https://arar.sci.am/dlibra/publication/41457/edition/37137?language=en

Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն»

http://books.panarm.info/%D5%B2%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80-%D6%83%D5%A1%D6%80%D5%BA%D5%A5%D6%81%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6--%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81